տապնդուել ու հետապնդուում է անգլիացիների կողմից։

Այս ծրագրին ընդառաջ է գնում Ռուսաստանը, որոշ վերապահումներով ու փոփոխութիւններով։ Ռուսական տեսակէտը լիուլի արտայայտուում է Սազոնովի 1916 թ. Փետր. 29-ին (13 Մարտ) Ցարին ներկայացրած հետեւեալ թղթի մէջ.

«Ի նախատեսութիւն պատերազմի յաղթական վախճանի եւ ի դէպս Թիւրքիայի ասիական կալուածների ճակատագրի հարցի յարուցման, Ֆրանսական եւ անգլիական կառավարութիւնները ներկայացրել են մեր քննութեան Փոքր Ասիայի բաժանման ծրագիրը, որ կազմուած է այդ վայրերին լաւատեղեակ պ. Պիկոի եւ Սըր Մ. Սայքսի կողմից։

Այդ ծրագրի հիմնական կէտերը յանգում են հետեւեալ բաների.

Ամբողջ տարածութիւնը Սեւ ծովի եւ այն գծի միջեւ, որ սկսւում է Ուրմիոյ լճից եւ ընթանում է դէպի Անամուր, Վանից, Բիթլիսից, Մուշից ու Խարբերդից հարաւ, Տաւրոս ու Անտիտաւրոս լեռնաշղթաներով, դրւում է Ռուսաստանի տրամադրութեան տակ՝ ապագայում տահմանագծելու համար թիւրքական սուլթանի հետ Անատոլիայում։

Ֆրանսայի տիրապետութեանն է անցնում մի նեղ ծովեզերեայ շերտ Սիւրիայում ու Կիլիկիայում, որը գնում է մօտաւորապէս Ակկայից մինչեւ Անամուր եւ ծրագրուած ռուսական տահմանից դէպի հարաւ գտնուող հողերը. մօտաւորապէս Այնթապ-Ուրֆա-Մարտին-Ուրմիա գծով։

Անգլիան ստանում է Պարսկաստանին ու Պարսից ծոցին յարակից, այժմ արաբական Իրաք անունով յայտնի շրջանը։

Ամբողջ շրջանը Ֆրանսական եւ անգլիական կալուածների միջեւ կը կազմէ անկախ արաբական պետութիւն (խալիֆայութիւն), կամ մի քանի արաբական իշխանութիւնների դաշնակցութիւն։

Նրա հիւսիսային մասը ճանաչւում է Ֆրանսական ազդեցութեան շրջանում, հարաւայինը՝ անգլիական։

Պաղեստինը կը կազմէ առանձին ինքնավար մի շրջան միջազգային հակակշռի տակ։

Բացի այդ, Ֆրանսան եւ Անգլիան ստանձնում են մի շարք պարտաւորութիւններ իրենց ազդեցութեան գօտիների մէջ, ապագայ արաբական պետութեան հողի վրայ, միմեանց առեւտրական ու տնտեսական ամէն տեսակ առանձնաշնորհումներ եւ դիւրութիւններ ընծայելու համար։

Նոյն ծրագրում մեզ համար ամենակարեւոր նշանակութիւնն ունի առաջարկուող Ֆրանսա-անգլիական սահմանը, որը պէտք է մեր ապագայ հողերը բաժանէ Ֆրանսականներից։

Տեղագրական տեսակէտից հետեւելով դլխաւոր լեռնաշղթայի ընթացքին, նա բաւական բնական է, բայց քաղաքական ու ռազմադիտական նկատումներով հազիւ թէ կարող է համարուել ընդունելի։ Մեր ասիական սահմանում, մեծ տարածութեան վրայ, խառն ու անհանդարտ բնակչութիւն ունեցող վայրերում մեծ եւրոպական պետութիւն երեւում է, թէկուզ ներկայիս մեզ դաշնակից, եւ նրա տեղաւորումը մի անկիւնով ռուս-պարսկական սահմանագլխին, պէտք է ընդունուի իբր անբաղձալի։ Բացի այդ, ի մասնաւորի մենք չէինք կարող ընդունել Ուրմիոյ շրջանում մի ուրիշ եւրոպական պետութեան վերապահութիւնը, իբրեւ հետեւանք մեր միսիոնարական շահերի կարեւորութեան տեղական քրիստոնեաների մէջ։

Մեզ համար կը լինէր ամենից աւելի ձեռնտու հարաւում ընդհանուր սահման ունենալ որեւէ ասիական մահմեդական պետութեան հետ՝ լինի այդ արաբական խալիֆայութիւնը կամ թիւրքական սուլթանութիւնը։ Այս տեսակէտը, թւում է թէ, արդարացւում է եւ այն նկատումով, որ Ֆրանսացիների հետ ունեցած մեր նախընթաց բանակցութիւնների ժամանակ Նեղուցների եւ Պոլսի մասին, մենք, համաձայնում էինք, ըստ Ֆրանսայի արտայայտած ցանկութեան, միացնել նրան միայն Սիւրիան ու Կիլիկիան մինչեւ Տաւրոս, իսկ Տիգրանակերտի շրջանը մտցնել Միջագետքի մէջ։

Սակայն, եթէ մեզ չյաջողուի անցկացնել այս տեսակէտը, այդ դէպքում անպատճառ պէտք է պնդել, որ մեր գօտու մէջ մտցուի Ուրմիայի շրջանը եւ Բիթլիսի անցքերը՝ տա-